ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ
ՄՏԱՎՈՐ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԳՐԱՍԵՆՅԱԿԻ
ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀԻ

ՈՐՈՇՈՒՄ

№2023-9-1-Ա

ք. Երևան 04.12.2023թ.

Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարության մտավոր սեփականության գրասենյակի բողոքարկման խորհուրդը (այսուհետ՝ նաև բողոքարկման խորհուրդ) 2023 թվականի դեկտեմբերի 4-ի նիստում քննարկեց 2023 թվականի ապրիլի 17-ին լիազորված անձ Կարեն Սարգսյանի կողմից ներկայացված «Կանադա» ՍՊԸ ընկերության (ՀՀ, Արարատի մարզ, գ. Սայաթ-Նովա, Թումանյան փ., 3-րդ փակուղի, տուն 7, AM) «ARARAT MILK» (No20221876) ապրանքային նշանի գրանցումը մերժելու մասին կրկնական փորձաքննության որոշման դեմ բողոքը:

Ապրանքային նշանի գրանցումը մերժվել է հետևյալ հիմքերով.

«Ապրանքային նշանների մասին» ՀՀ Օրենքի (այսուհետ՝ Օրենք) 9-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետի և ՀՀ կառավարության 2017 թվականի օգոստոսի 10-ի N 1017-Ն որոշմամբ հաստատված «Ապրանքային նշանների հայտերը լրացնելու, ներկայացնելու և քննարկելու» կարգի (այսուհետ՝ կարգ) 93-րդ կետի 7-րդ ենթակետի համաձայն որպես ապրանքային նշան գրանցման ենթակա չէ այն նիշը, որը սպառողներին կարող է մոլորության մեջ գցել ապրանքների կամ ծառայությունների աշխարհագրական ծագման, դրանց որակի, բնույթի կամ արտադրողի վերաբերյալ հարցերում: Տվյալ դեպքում հայտարկված նիշը ենթակա չէ գրանցման որպես ապրանքային նշան 29-րդ դասի «պանիր. կարագ. յոգուրտ. թթվասեր. խտացրած կաթ. կաթնաշոռ և այլ կաթնամթերք» և 30-րդ դասի խնդրարկված ապրանքների համար, քանի որ «MILK» բառը ներառող նիշը սպառողներին կարող է մոլորության մեջ գցել ապրանքների բնույթի և տեսակի վերաբերյալ հարցերում՝ հաղորդելով կոնկրետ տեղեկատվություն ապրանքի տեսակի վերաբերյալ: Օրենքի 10-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի համաձայն գրանցման ենթակա չէ այն նիշը, որը նույնական կամ նման է ավելի վաղ ապրանքային նշանին, և դրանով մակնշվող ապրանքների և (կամ) ծառայությունների նույնական կամ նույնատիպ լինելը հանրության մոտ շփոթություն առաջացնելու վտանգ է պարունակում, ներառյալ՝ ավելի վաղ ապրանքային նշանին զուգորդվելը: Տվյալ դեպքում հայտարկված նիշը ենթակա չէ գրանցման որպես ապրանքային նշան,

քանի որ այն շփոթելու աստիճան նման է 29-րդ, 30-րդ դասերի ապրանքների համար գրանցման հիման վրա Հայաստանի Հանրապետությունում պահպանվող «Ararat» («Արարատ ինթերնեյշնլ» ՍՊԸ, ՀՀ, ք. Երևան 0037, Վ. Դավթյան փ., տուն 13, AM N 35826 13.10.2022, N 35501 29.08.2022) բառային ապրանքային նշաններին: Կարգի 124-րդ կետի 10-րդ ենթակետի, 130-րդ կետի 2-րդ ենթակետի, 131-րդ կետի համաձայն համակցված ապրանքային նշաններին նման կարող են համարվել ապրանքային նշանների այն տեսակները, որոնք որպես տարրեր ներառված են ստուգվող համակցված ապրանքային նշանի մեջ: Տվյալ դեպքում համեմատվող ապրանքային նշաններն ունեն ձայնային նմանություն, որը որոշվել է նշաններից մեկը մյուսի մեջ մտնելով, այն է՝ գրանցված «Ararat» բառային ապրանքային նշաններն ամբողջությամբ ներառված են հայտարկված համակցված ապրանքային նշանի մեջ:

Կոլեգիայի նախագահը բողոքարկման խորհրդի քննարկմանը ներկայացրեց կոլեգիայի նախնական քննարկման արդյունքները՝ բողոքը մերժելու, կրկնական փորձաքննության որոշումը ուժի մեջ թողնելու վերաբերյալ, քանի որ «Ապրանքային նշանների մասին» ՀՀ Օրենքի (այսուհետ՝ Օրենք) 9-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետի համաձայն որպես ապրանքային նշան գրանցման ենթակա չէ այն նիշը, որը սպառողներին կարող է մոլորության մեջ գցել ապրանքների կամ ծառայությունների աշխարհագրական ծագման, դրանց որակի, բնույթի կամ արտադրողի վերաբերյալ հարցերում: Տվյալ դեպքում հայտարկված նիշը ենթակա չէ գրանցման որպես ապրանքային նշան 29-րդ դասի «պանիր. կարագ. յոգուրտ. թթվասեր. խտացրած կաթ. կաթնաշոռ և այլ կաթնամթերք» և 30-րդ դասի խնդրարկված ապրանքների համար, քանի որ «MILK» բառի առկայությունը սպառողներին կարող է մոլորության մեջ գցել ապրանքների բնույթի և տեսակի վերաբերյալ հարցերում՝ հաղորդելով կոնկրետ տեղեկատվություն ապրանքի տեսակի վերաբերյալ: Ինչպես նաև Օրենքի 10-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի համաձայն գրանցման ենթակա չէ այն նիշը, որը նույնական կամ նման է ավելի վաղ ապրանքային նշանին, և դրանով մակնշվող ապրանքների և (կամ) ծառայությունների նույնական կամ նույնատիպ լինելը հանրության մոտ շփոթություն առաջացնելու վտանգ է պարունակում, ներառյալ՝ ավելի վաղ ապրանքային նշանին զուգորդվելը: Տվյալ դեպքում հայտարկված նիշը ենթակա չէ գրանցման որպես ապրանքային նշան, քանի որ այն շփոթելու աստիճան նման է 29-րդ, 30-րդ դասերի ապրանքների համար գրանցման հիման վրա Հայաստանի Հանրապետությունում պահպանվող «Ararat» («Արարատ ինթերնեյշնլ» ՍՊԸ, ՀՀ, ք. Երևան 0037, Վ. Դավթյան փ., տուն 13, AM N 35826 13.10.2022, N 35501 29.08.2022) բառային ապրանքային նշաններին: Տվյալ դեպքում համեմատվող ապրանքային

նշաններն ունեն ձայնային նմանություն, որը որոշվել է նշաններից մեկը մյուսի մեջ մտնելով, այն է՝ գրանցված «Ararat» բառային ապրանքային նշաններն ամբողջությամբ ներառված են հայտարկված համակցված ապրանքային նշանի մեջ:

Բողոքարկողը համաձայն չէր կոլեգիայի նախնական քննարկման արդյունքների հետ:

Փորձաքննության բաժնի պետը համաձայնվեց կոլեգիայի նախնական քննարկման արդյունքների հետ:

Ամփոփելով ընդհանուր քննարկումը և ղեկավարվելով ՀՀ կառավարության 2022 թվականի մայիսի 6-ի N774-Ն որոշմամբ հաստատված «Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարության մտավոր սեփականության գրասենյակի բողոքարկման խորհրդում բողոքների, դիմումների և առարկությունների քննարկման կարգի» 70-րդ կետի 3-րդ ենթակետի դրույթներով՝ բողոքարկման խորհուրդը քվեարկության արդյունքում միաձայն.

Ո Ր Ո Շ Ե Ց

Լիազորված անձ Կարեն Սարգսյանի կողմից ներկայացված «Կանադա» ՍՊԸ ընկերության «ARARAT MILK» (No20221876) ապրանքային նշանի գրանցումը մերժելու մասին կրկնական փորձաքննության որոշման դեմ բողոքը մերժել, փորձաքննության որոշումը թողնել ուժի մեջ:

ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԽՈՐՀՐԴԻ
ՆԱԽԱԳԱՀ ՌԱՖԱՅԵԼ ԳԵՎՈՐԳՅԱՆ